

ՀՐԱԶԵԱՑ ԱԺԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻՒԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

Հրատակող՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

15.

[Նոր - Նախիջեան
1910 Դեկտ. 28]

Գերապատիւ

Հայր Ն. Ակինեան,

Նախ պատիւ ունիմ շնորհաւորել Նոր Տարին և Ս. Ծննդեան տօները: Կը մաղթեմ յաջողութիւն թէ՝ առանձնական և թէ Զեր իմբագրուկան գործերուն մէջ, Նամակիս հետ փաստ կը յանձնիմ բաւական ընդարձակ ծրար մը, որուն մէջ պիտի գտնէք Զեր ինդրած Մեր Զայնի պակոս թուերը, Ս. Մերորդի շարաւակութիւնը և երեք կտոր գիրք: Մեր Զայնի թուերը շատ զժուարութեամբ կրցայ ձեռք բերել, որովհետեւ լամբագիրը այլ ես հոս չէ և բույր թերթերը իր հետ փոխադրեց է: ուրիշներ պակաս չէին: Վերջապէս Պր. Զամբինեանը իր հաւաքածոյէն հանեց և ինձ տուաւ: Ձեզ ուղարկելու համար: Հանդէսի յունվ: համարին մէջ տողիկ մը շնորհաւութիւն գնէք, լաւ կ'ըլլայ: Միւս երեք կտոր գրեթերը ինդրեմ հաճիք յանձնել Հ. Բ. Պիլցպիկենեանին՝ գրադարանի համար: Ներողութիւն որ ուշացուցի: Կ'ուղակէի բոլորը միասին ուղարկել:

Ս. Մերորդին ուղարկեցի մէկ գլուխ ես. այն է Դանիէլեան գրեթեր, որ բաւական ընդարձակ բան մ'եղաւ: բնագիրու շատ աւելի կտրմ էր, բայց երբ ձեռք առի, կտոր մը հոս, կտոր մը հոս աւելցնելով՝ այդչափ բան գուրս եկաւ: Կը մնայ ևս երկու գլուխի: մին ասորի, պարսիկ: յօյն գրերու գործածութեան մասին մեր մէջ և երկրորդը բուն Մերորդին գրեթեր: Ասունծով այն ալ կը վերջացնենք:

Յօյս ունիմ որ յունվարէն սկսեալ Հանդէսը կ'ուղարկէք Պր. Զամբինեանին: մէկ օրինակ ալ իր փորձ, խնդրեն ուղարկէք առ Պր. Ճէնանեան, Թիմ. Դպրանցի անունով. Nr. Djénanian, Séminaire arm. Nakhitchévan s/c Don:

Մերաստիացէն Պր. Գարիկեան Զեղի յօդուած մը զրկեր է նշանադրերու մասին: յօդուածը պատճ չէք՝ առարկելով թէ իմ պիտի տպուի: արդ նոյնը Մերաստիոյ Նօրակ թերթին մէջ տպել տուեր էր: բայց պատգրութիւնը շատ զէշ ըլլալով՝ նորէն յօդուածը արտագրեր և ինձ զրկեր էր: Ուշադրութեամբ համեմատելով իմ ցուցակին հետ, տեսայ որ իւր 300ի չափ նշանադրերուն մէջ 25 հատ բուրովին նոր բասեր կան, որ կը պակի ին իմին մէջ: ասկէ զատ կան նաև խումը մը նոր նշանակեեր (բասուրը նոյն են, նշանաձեերը ասորեր): Բոլորը միտօին եթէ հաւաքենք՝ իմ հրատարակած ցուցակին չ'ը կ'ըլլայ, այսինքն Հանդէսի մէջ էջէն քիչ մ'ալ պակաս: Արդ կը հարցնեմ թէ կ'ուղէ՞ք կամ կարելի՞ն է այս նոր նշանակերը հով, իրը յաւելուած կցել նախորդին, մանաւանդ որ արտապութիւնը գեն վերջանած չէ: Կ'ուղասիմ ձեր բարեհան պատասխանին:

Մաղթելով Ձեզ ամէն յաջողութիւն
մամ յարգանոք

Հ. ԱզԱՌԵԱՆ

¹ Նոր նախիջեանի մէկ Զայնը գարբերաթերի խմբագիրը եղել է Եղիշեանեան Սալխան-խան (1866-1931), գիւղադիր, մանկավարդ և հասարակական գործիչ: 1903ին աբուրուել է նոր նախիջեան: իր թերթուն հակացարական յօդուածներ ապագրելու մէշագրանքը բանագրական է 1909ին, որ Ա-ը չէր կարող բացայալութիւնը յաջնենէ:

² Պարիկիան հարապէ (1861-1925), բառարանագիր, ազգագրադիմ, մանկավարժ: Արտաքինին պարիկիան հարապէ (1861-1925), բառարանագիր, ազգագրադիմ, մանկավարժ: Արտ-

5. Հ. ԱՂԵՔՍԱՆԻՐ ՄԱՏԻԿԵԱՆԻՆ

16.

26 Հոկտ. 1913

Նոր - Նոյինիշեան

Գերապատիւ Հայր Մատիկեան¹,
Խմբագրապես և Հանդէս Ամսորեայցի,
ի Վիհեննա.

Զեր խնդրանքին համաձայն շտապ կերպով կազմելով նոր - Բայազէտի ձեռաւ-
դրաց ցուցակին յառաջարանը, ցանկը, գերմաններէն թարգմանութիւնը և տախտա-
կը, ապահովեալ ծրարով կ'ուղարկեմ Ձեզ այսօր։ Որպէսուե գրած էիք որ ընդ փոյթ
կազմեմ և ուղարկեմ յիշեալները, ուստի ես ալ ժամանակ չվատնեցի գրածներու
արտագրելու և երկրորդ օրինակ մը քովս պահելու՝ սրբագրութեան և համեմատու-
թեան համար. ուստի կը խնդրեմ որ երբ այսօր զրկած ձեռագրերու տպուին[ն], ան-
պահնաւ և ամեն պարագայի մեջ ալ ձեռագրերս իս դարձնեմ ինձիւ Հանդէսի նախկին
խմբագրինները սովորութիւն ունէին միշտ և ամէն ժամանակի թմ արտատպելիք գոր-
ծերու մէջ մ'ալ ինձ խրկեւ սրբագրութեան համար. և ես կ'ունենայի քանի մը կա-
րեսը սխալներ և կ'ուղղէի, Վերջերս զժբախտարար այս բարի սովորութիւնը դադ-
րեցաւ և ես ստիպուած կ'ըլլամ գրածները երկրորդ անգամ ալ արտագրելու և քովս
պահելու, ինչ որ ժամանակի մեծ կորուստ է, ժանաւանդ ինձ համար, որ բացի
ընտանեկան գործերէ, օրինա հինգ ժամ դամ դաս ունիմ. և այլ ես ինչքան ժամանակ
կը մնայ գրական աշխատութիւններով պարապելու։

Նոր - Բայազէտի ցուցակին ինձ վերադարձուած է թ. 1-7, 11-17 ձեռագիրնե-
րուն նկարագրութեան ընտակիրը. Ցացեալը ամբողջապէս ձեր քով կը գտնուի. ինձ
ուղարկուած չէ. Ուղարկուած մասերը ես ալ համեմատած և սրբագրած եմ և այս
մասերուն արտատպութեան մէջ ապագրական սխալներ չկան։ Մնացեալներուն մէջ՝
որ ես տեսած չեմ, Աստուած թմ, այս ինչքան և ինչպիսի սխալներ սպազած են,
թանի մը օրինակ տամ։

— էջ 17ա, տող 2. տպուած է աղամեն. պիտի ըլլայ պպ (803) ունէնա,

— էջ 20, տող 3 (վարէն) — սկզբնատառերը են. ինչ դոյն են չէ ըստուած.
Ակբբնատառերը ըստուած և թողուած է։

— Նոյն էջ, տող 1 (վարէն) կ'ըսուի թէ խաչը ունի 3 բիս. չեմ հասկնար թէ
խաչին թիւը ինչ բան է. թիւ պիտի ըլլայ արդեօք։

— էջ 21ա, տող 5 (վարէն), էջ 07 բ (քանի բսել կ'ուղղէ)։

— էջ 28, տող 17 (վերէն). Աւետարանին բազմադակութիւնը էջերով յիշուած
է. Մատթէոս, Մարկոս կայ. յանկարծ 146 էջէն կը թատէ 224. Պուկասի մասին
եղած տեղեկութիւնները փախցուցած է. ձեռագիրս քովս չէ որ ստուգեմ և գտնեմ
պիտի ըլլայ, գդիտեմ։

— էջ 29ա, տող 1 վարէն. սիւնակներուն մեծութիւնը գրած է 9 երկայնք,
16 լայնք. կրնա՞յ այսպէս բան տեղի ունենաւ. ինչպէս պէտք է ուղղել, չգիտեմ։

— էջ 29բ, տող 2 (վարէն), տողերուն թիւը գրած է մէկ էջի մէջ 121 ինչ
պիտի ըլլայ, գդիտեմ։

— էջ 31ա, տող 11 (վարէն) կը յիշուի Խոսրով Ցորցակեցի նոր վկայ մը.
այսպիսի նոր վկայ կա՞յ որ, ինձ ծանօթ չէ,

— էջ 44ա, տող 2 (վարէն). ձեռագրի նկարագրութեան մէջ կ'ըսուի Մեծու-
թիւն՝ մակուր. չափերը փախցուցած է. ես ինչպէս գուշակեմ. գերմաններէն թարգ-
մանութեան մէջ ալ տեղը բաց ձգեցի։

— էջ 46ա, տող 8 (վերէն). գատարկ Թուղթերուն մէջ կը յիշուի էջ 138 ա-
272 բ. ուրեմն 140 թիւր պարմպ է թողած. անկարելի բան է. բայց ինչպէս պէտք

Այսպիսի սխալներ գետ շատ ու շատ կան են ամէնէն հետաքրքրականները ցոյց տուի, անտոնկ որ տուանց ձեռագրի համեմատութեան անկարելի է ուղղել Յիշ շատակողութեանց մէջ խիստ չտա տեղեր կան, ուր կ'զգամ թէ ակնյայտնի սխալ մը կայ, բայց անկարող եօ ուզ ել, օրովհետեւ բնագիր չունիմ, Այս բոյորը ի նկատի ունենալով, Թախանձագիրն կը խնդրեմ Ձեզմէ, Հ. Մատիկեան, որ փառէք իմբրադրութեան հին թուղթիրուն մէջ և ինչ որ գտնէք ձեռագրէն, այսօրուան ուղարկած ձեռագրերուն փորձերուն հետ բարի ըլլամ թնձ ուղարկելու ապահովեալ, որպէս զի ես ալ կարող ըլլամ գտնէ զրիպակներու ցանկին մէջ սխալները ուղղելու։ Meilletի խորհրդով յատուի ժամադրութիւն դարձուած էի ես յատկապէս ձեռագիրներուն մէջ գտնուած ժամանականներուն վրայ, որպէս զի անոնց քննութեամբ կարողանայինք երեան հանել որ մը հայերէն տառերու յետին ննչափիխութեանց օրէնքները. արժմ որ այլ ևս անկարելի է գտահիլ ճիշտ ապագրաւած բլլալուն վրայ, մեռաւ աշխատութիւնու ինչ կրնամ ընկեր

Հասծներէս կ'երևայ որ ցուցակ բոյորովին աւերտած չէ. դեռ վրիպակներուն նոխ ցանկ մը ունինք պատրաստելու, որ սակայն գլխաւորապէս ձեզմէ կախուած է Անուններու ցանկն ալ ամբողջ թիւէ ու տառէ բազկացած ըլլալով, ևնթակայ է բազմաթիւ վրիպակներու և պատրական սխալներու. Օրինակի համար, Թաւրիզի Զեռ. ցուցակին ցանկը երբ տպեցին, ևոն ալ Ծիրացու յատուկ անոնց գուրու ձգեր են ցանկէն. և որովհետեւ թիւրիզ պիտ օրիցաց բառը նաև հասարակ անուն է, չդիտ զոյզ զիս պիտ գտասպարտէ և ըսէ թէ Աննուեանը չէ կրցեր որոշել թէ այս տեղ Ծիրացու բառը մարգու յատուկ անուն է և ոչ թէ հասարակ անունն Ներկայ ցանկին մէջ ալ Տերեկ յատուկ անուն մը կայ. կը խնդրեմ որ յատուկ ուշագրութիւն դարձնէք առոր վրայ և սխալմունք կարծելով գուրու չանէք ցանկէն։

Հետոյց գրերը աշխատաւթիւնս ալ շատ անբախտ գուրու եկաւ. այս տարի յարելեանական տարի էր. Խնչպիսի յարմար գէպէ էր. եթէ ոպէիք ժամանակին և կարող ըլլայինք այս տարի վերջացնել, ինչ աղէկ կ'ըլլար. Զեզի զեզ ամիս տառչ Հայկական մը իրկած էի, որ պատասխան մ'էր Տր. Թիրեաքեանին մէկ գրութեան. այսուեակ գրութիւնները՝ որ մէկը մէկուն պատասխան մը կու և ձեր գրածին համաձայն դեռ ևս 3-4 ամիս սպասենք, գրեթէ տարի մը յետոյ գրուած պատասխանը ի՞նչ արժէք ունի. արդէն ենցինակն ալ իրեն ըստեց մուսցած կ'ըլլայ. Դուք, փօխանակ այսօպիսի տաօրիայ նշանակութիւն ունեցող բան մը (որ արդէն մէկ երեսուն բան ալ է) որը որին տպելու տարի մը կը ձգձգէք, մինչդու անդին Ա. Ցակորեան հիւանդանուցին պատմաւթիւնը, որ ոշիարէիս ամէնէն անհետագրքական բանն է և ինչքան ալ ազգուի (օք. 100 տարի յետո), այնքան աւելի հետաքրքրական կ'ըլլայ, կ'եւլէք և ամէն ամիս տասնեակներով սիւնակներ կը լեցնէք. Թաւ լիցի ինձ, որ Զեզ ճանապարհ ցոյց տամ. արդէն այսքան փոքրիկ նկատողութիւնն ալ գուց յանդգնութիւն է իմ կողմէս, բայց մի մոռնաք որ ես ալ տար չեմ. 1896 Բուէն.ի վեր հանդէսի մէջ եմ. Վիեննական ո՛ր հայրը որ տեսած եմ, զիս իրենցմէ յորչորջած է. վկայ Թող ըլլան Գոլսոյ Վիեննական վանքի պատուական հայրերը (ժամանակ պատկառելին և իմ յաւէս սիրելին Հ. Թովման կէտիկնեանը), որով շարունակ կը հրատիրէին զիս այս ամառ իրենց վանքը, Երևանթիւն կուտային ինձ աշխատելու, ուղածիս պէս օգտուելու իրենց մասնադարանէն են, ու զիս իրենց մարդը կը կոչէին. Այս տեսակէտէն նայելով ինդրին, թո՛ղ ըսածներու ծանր չերեան, այլ միշտ միայն Հանդէսին աւելի լաւը ցանկանալու ջերմ փափաք մը։

Անցեալ օրեր Հ. Գիլէզիկնեանէն թուղթ մը ստացած էի, որուն մէջ կը գրէր թէ Գրիշ Թերթը ամբողջ չէ ուղարկուած. պակասները կ'ուզէք որ գտնեմ և զրկեմ. բայց գրքախտաբար չէր ըստ թէ պակաս թուերը որոննք են. կը խնդրեմ որ կամ բայց գրքախտաբար չէր ըստ թէ պակաս թուերը որոննք են.

երկողով մը և կոմ Հանդէսի Նոյեմբերի թղթակցութեանց մէջ երկու բառով յիշեցնէք ինձ և իսկոյն կը զրկեմ:

Թանի մը անգամ գրեցի Զեզ թէ Հանդէսը այս տեղ շատ անկանոն կ'ստացուի. առաջ ալ այսպէս էր. բայց երբ պակասները կը յայտնէի, կ'ուզորկէին: Խմ պակասները ուզորկցիք, չնորնակալ եմ: Բայց Թաղաքային գրադարանին, Դպրանոցին և Պր. Զամինեանի պակասները չուզարկեցիք: Այս գրագային գիտցէք սակայն որ բաժանորդ պիտի կորսնցնէք: Թաղաքային գրադարանը արդէն կը ուստական հաստատութիւն մ'է, հայերէն թերթ քիչ կայ կարգացող. գրադարանի վարչութիւնը կ'ըսէր թէ Հանդէս կարդացող մեկ հոգի ալ չկայ (ճիշտ է, որովհետեւ Հանդէսով հետաքրքրութեան կամ տառեծին բաժանորդ են, ինչպէս ինձ պէս և Պր. Զամինեան, և կամ Դպրանոցին գրադարանէն կ'ստանամ) և կ'ուզէր որ այլ ևս չնչէ թերթին ստացումը: Շատ խօսեցայ ես և համոզեցի թէ Հանդէսը լրագիր չէ, կարգացող անշնչաց չպիտի ուսնենայ, բայց արդարք գիրք միշտ պէտք է ապագայի համար են:, եթէ պակաս համտուները շարունակեք չզրկել: Կը վախնամ որ բոլորովին գաղրին բաժանորդ ըլլայէ: Պարոն Զամինեանն ալ չսրս թիւ ստացած չէ: այս է Յուլիո-Օգոստ. - Սեպտ. և Հոկտ.: Այս թուերը սակայն եթէ զրկէք, իսկդրեմ իմ միջոցով մի զրկէք, որպէս զի վրաս կասկած չըլլայ: թէ Ես կ'ստանամ, բայց չեմ յանձներ իրենց:

Առնարի յարդանագ Հ. Ազնվելին

Հ. Ազեմանիր Մատիկեանը (1866-1930), բանասէր, եղել է ՀԱՀ իմրադրութիւն 1913-1920 թթ.:

2 Ձեռագրացուցակի մեր սուսպամբ պարզեց, որ ԱՀ-ի նշան վրեպահները մնացել են առանձնատիպում էլ, և զերչամ վրեպահների ցանկ չկայ:

3 Թեր, թուրք, հակառակի:

4 Ցորեանական տարի: 1913թ նշանը է հայերէն գրերի գիւտի 150ամեայ յաբեկանը, ուրվեական այն ժամանակ կ նկատուած էր 413 թաւականը, այժմ՝ 406: Նոյն տարին տառեւնը է հայերէն տաղագրութեան 400-ամեակը:

5 Հայկականը, ՀԱ, 1914, թ. 8-9, էջ 563-566. Նախ խօսում է տարածական բարձրագույն արդարադարձ է բժ. Յ. Թիրեաքեանի բարակարտ, բերմանար կամ պարագար որրադրութեանը, բայց թունում է ամփափոն, որպէսուակ բազմաթիւ անդամ նոյն ուղղագրութեամբ է գործածուել:

6 Թիրեանակ Ցարարին (1845-1919), բժիկ, բանասէր, լեզուաբան, բարուրանագիր, թարգմանչ, աշխատաւթիւնների հեղինակ՝ «Արիանայ բառարան» (1920), ուր սուսպարաննել է հայերէնի պարեական փախառութիւններ: ՀԱ-ում ունի բառաքննական գիտութիւններ, որուցից է «Ծննդակական աշխատանք» (1912 թ. 7, 424-428):

7 Հ. Խանկակ Մատիկեան (Անտոնեան միաբան), «Յ. Ցակոս ազգային հիւանդանոց», ՀԱ, 1911-1914:

8 Նամակի ոկշում եղած անունից յառակ երկում է, որ այն ուղղուած է եղել Հ. Ա. Մատիկեանին, իսկ Հ. Ն. Ակինեանը ՀԱ, 1953, էջ 449 ում գրել է: «26 հոկտ. 1913 կը գրէր ինձ (Ընդդաւմը մերն է) Անասեան նոր-նախիշեանէն: ԱՄ մանաք որ ես ալ սոսր մը եղած չեմ: 1896 թուեն ի վեր Հանդէսի մէջ եմ ... կը գուէին»:

9 Անը 1896ից է սկսել աշխատակցել ՀԱ-ին:

(Ցարաւնակելի՝ 8)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՍԵԱՆ